

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-ԻՆ ՀՈՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ (ԻԿՐԱՆԵՏ) ՄԻԶԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻԿՐԱՆԵՏ-Ի ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 մայիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի փետրվարի 13-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռեյաստիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցի (ԻԿՐԱՆԵՏ) միջև Հայաստանի Հանրապետությունում ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոն հիմնադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 23.04.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռեյաստիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցի (ԻԿՐԱՆԵՏ) միջև Հայաստանի Հանրապետությունում ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոն հիմնադրելու մասին համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի փետրվարի 13-ին՝ Հռոմում:

2. Համաձայնագրի նպատակն է զարգացնել և ամրապնդել Հայաստանի Հանրապետության և ԻԿՐԱՆԵՏ-ի միջև համագործակցությունը՝ ռեյաստիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում հետազոտությունների, վերապատրաստման և կրթության խթանման նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գիտնականներին և մասնագետներին ընդգրկել ԻԿՐԱՆԵՏ-ի կողմից կազմակերպվող և իրականացվող միջոցառումներում և հետբուհական ու հետդոկտորանտական մակարդակներով վերապատրաստման ծրագրերում, նաև աջակցել փոխանակման ծրագրերի համատեղ իրականացմանը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- կատարել ներդրումներ տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության՝ տվյալ տարվա պետական բյուջեով գիտական և տեխնոլոգիական գործունեության համար նախատեսված ընդհանուր միջոցների շրջանակներում (հոդված 4, կետ 2),

- ապահովել Կենտրոնի տարածքների և սարքավորումների ապահովագրությունը (հոդված 4, կետ 4),

- երաշխավորել, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Կենտրոնի գործունեության համակարգման նպատակով կստեղծի Կառավարման խորհուրդ (հոդված 5, կետ 1):

4. Հաշվի առնելով, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունում ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոնի ստեղծումը կնպաստի ռեյատիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում հետազոտությունների, վերապատրաստման և կրթության խթանմանը, ինչպես նաև կապահովի Հայաստանի Հանրապետության գիտնականների և մասնագետների ընդգրկվածությունը ԻԿՐԱՆԵՏ-ի կողմից կազմակերպվող և իրականացվող միջոցառումներում, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն Համաձայնագիրը բխում է ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ կառավարության կողմից գիտության, կրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունից և ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանված՝ գիտության զարգացմանը նպաստելու խնդրից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի փետրվարի 13-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռեյաստիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցի (ԻԿՐԱՆԵՏ) միջև Հայաստանի Հանրապետությունում ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոն հիմնադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 մայիսի 2015 թվականի
ՍԴՈ-1209